

Lur4[✓]

332

~~377~~

305

2 000

332

332

44

305

ՄԿԻՃԻ ՄԱՍՅԱՐԳԱՆԵՐ



(Ճարտ — Կարգի միջոցով)


Հեղինակություն

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԷԼԵԱՆՅԻ

44

Բ Ա Դ Ո Ւ
ՏՊԱՐԱՆ „Ա Ր Օ Ր“
1899

1521



Доволено цензурою Тифлисъ, 10-го Декабря 1898 г.



28 331/ (5234) 38/ 332-2003

ՄԿԻՃԻ ԱՊԱՀԱՐՁԱՆԸ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԵՐ:

ԱՅՐԱՀԱՄ, ծեր վաճառական, հին տարազով:
 ՀՈՒՀԱՆ. նրա երիտասարդ կինը նոր տարազով:
 ՄԱՐՏԻՐՈՍ. նրանց բարեկամ, մօտ 50 տարեկան:
 ՄԱՐԹԱ. սրա կինը, երիտասարդ:
 ՄԷՆԳԻՄՈՒԱ. Կիսակիրթ ոմն, երկար գորշ սիւր-
 տուկով, լայն միրուքով, մի հաստ
 փայտ ձեռին, ակնոցներով, սիւր-
 տուկը մինչ կոկորդը կոճկած:
 Նայում է մարդու կրծքին:
 ԽՕՋԱ-ԱՐՋՈՒՄԱՆ. մի գիւղացի, գինւորի շինե-
 լով, մորթէ գտակով:
 ԱՆԹԱՌԱՄ. սրա կինը, տներում բան անող:
 ՄԿԻՃ. Արրահամի տան ծառան
 (Տես «Մկիճի հարսանիքը»):

Անցքը պատահում է Բախում «Մկիճի Հար-
 սանիքի» միւս օրը.

Настоящій водевиль, подъ заглавіемъ
«Разводъ Микича» разрѣшенъ Главнона-
чальствующимъ для представленія на сце-
нахъ края. Января 30 дня 1899 года.
г. Тифлисъ.

Предсѣдатель Комитета М. Баязовъ.

Секретарь Н. Меликъ-Нужбаровъ.

Բէմը ներկայացնում է երկու կողմից շրջա-
պատած տներով ընդարձակ պաղտէղ: Ձախ կողմ
Մարտիրոսի տան դուռը: Աջ կողմի խորքում պար-
տէղի շարունակումներ: Մէջ տեղ պզու մեծ դուռը
կողքերը վանդակապատ: Հեռուն հին բերթի պատե-
րի շարք: Բէմի վրա Թփեր, որոնց առաջ ոչ
երկար նստարաններ: Առաւօտ է: Մարտիրոսի տան
առաջ նաւթի ջահ:

Վարագոյրը բացուում է, Մկիճը
բարկացած դուռն է գալիս ու ջահը
տեղից հանում ֆցում մի կողմ ու գա-
լիս բեմի առաջ:

ՏԵՍԻԼ 1.

Մ Կ Ի Ճ Մ Ե Ն Ա Կ:

Ժամի տեղ՝ Թունդուր, փութվարի
տեղ՝ քեօտով, տէրտէրի իրէսը վէր ա-
րած, Խաչ-Աւետարանի տեղ՝ «Դու-
րուխտէտը, աղօթքի տեղ՝ փրստափրստ:
Ասըմամ «Ապեր, խտէ մին պիճիւթիւն
կայ», ասըմ ա «ծանիթ կտրի, դա մեր

հին սորվութիւնն ա, ծեռաց-փսակը
թունդուրի վերա՝ կանան: Հիմի ֆիքր
ա՛մ անըմ, քի ա՛գա՛նա՛մ խտէ մին ֆա՛նդ
չ՛կայ, տա հինչի՞ ա՛ս փըսակը թաթար-
եախնի կլօխ պերին: Տէրը Խնքի վերչը
պարի անի, լա՛ւ խաթաբալի մէջ ա՛մ
ընդալ, ծէ՛ր արեւ: Ասա՛, Մկիճ-տղայ,
կնիդ իր ուղում, կնիդի կլխաթ զա՛հաթ
էր իլա՛ւ: Ա՛խ, ա՛յ բէյմիւրլաթ Աբրա-
համ ապէր, զա՛լաթ արի մին պէրան
սրտիդիս խորուրթը քեզիդին ասեցի.
բա՛գա՛ հա՛նց տիւ մին հիւշտի իր
բա՛նդ, քի ա՛ս օծի ճուտին իմ վիզի-
դիս փըթաթիր: Թա՛հաթ-թիւհիւրիս
ա՛մ միտիդ անըմ, արմածկը-զարմած-
կան քիչ ա՛ մնամ դամլա կտրամ: Ա՛ս
մեծ-պաս էրկուշափթի տա հի՞նչ կա-
նանչ կա՛րմիւր ա՛ տի՛ւ էս կապալ, տա
հի՞նչ զըյամաթ ա, տի՛ւ էս պարցրա-
յուրա՛ւ: Ա՛խ, ա՛յ բէյմիւրլաթ Անթա-
ռան. ո՛չ իր լիւս աշխար եկալ, սե
իէր ա՛ն օրը քի ես քեզ սիրեցի: Ախր

ե՛ս հո՛վ, սէրը հո՛ւ: Ասիլի պա՛ն ա՛, քի
մին դանա ախչիդան հետի ա՛րա՛գվա՛ն
օրը մեռնէս, սատկէս, հինչ զիւլիւմով
փըսակ կլօխ պէրիլ տաս, աս օրվան
օրը համին ա՛ն ախչիդի աշկիդ փուշ
իլի, աշկիտ օծ իրեի, չըմանաս քի եա-
խաթ հի՛նչպէս աղատես նրա ճանդե-
րան: Տա զիւլիւմ դա՛րդ ա՛. տա ա՛լաթ
մաթ ցաւ ա, աա, տա, տա.... տա
մին կաղէթ քիցիլի պատմութիւն ա:

ՏԵՍԻԼ 2.

ՄԿԻՃ ՈՒ ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

(Ներս է գալիս միջի դռնով): Ամ
բողջ գիշեր նրանց տան ճրտղը վառ էր:

Մ Կ Ի Ճ.

Տէր, Տիւ ինձ ա՛ս կրակի մէջն էս
քիցա՛լ, Տիւ ա՛լ փիրդէս: (Նկատելով
Մէն-Գիւմ-Ռային). Շորերը երկաններան
ա իրեւմ, տա լա՛ւ իլա՛ւ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

(Ուղղելով ֆայերը դէպի Մկիճը):
Ախ, այդ դժուար էս, Շուշան:

Մ Կ Ի Ճ

Շուշան: Տա խանրմիս անըմն ա.
խտի մին պահն կայ: (Զուխայի ծայրը
ֆաշելով գլխին՝ կիկն է մեռանում):
Ախ նազլիգ ջան, տի՛ւ էս: Իմ թան-
գանոց քար, իմ գլխիս տէր, իմ Ակա-
թանկեօղուս, իմ բայբայ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

«Բայբայ»: (Կողմ): Սա Շուշանի
ձայնը չէ: (Մօտենալով ճնշողում է Մկի-
ճին): Ախ այ անպիտան, հէնց խմացայ
վերջին մօդայով հագնւած կին էս:

Մ Կ Ի Ճ

Եաղլիշ էս, տա հին մօդայով ա:
(Շփուլ է շորերը):

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ակնոցներս մաքրուր չեն:

Մ Կ Ի Ճ

Հինչի՞. ճաղացի ակուշկի հետնան
կանկուրենց կանան:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ի՞նչ:

Մ Կ Ի Ճ

Ասըմամ համամի ակուշկի հետնան
կանկուրենց կանան:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

(Սրբելով ակնոցները դնում է աշ-
ֆերին եւ նորից նայում Մկիճին, սո-
փորաբար հայեացք ուղղելով նրա
կրծքին) Երեւի ուրախ բարիկենդան էս
անցրել:

Մ Կ Ի Ճ

Հրամմէրէս. հրամանոցս հարսա-
նիքն էր:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Ինչպէ՞ս, բարիկենդան գիշեր...
Ուրեմն Տեառնդառաջը մեծ պատին է
գալիս... չէ... հա՛ա, հասկացայ—գի-
մակաւորւած ես եղելէ Ապա ո՞ւր է
դիմակդ:

Մ Կ Ի Ճ

(Եղկրած). Համմէ՞, տիւմա՞դ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

(Կողմ). Պէտք է սրա հետ երբեմն
դռնհիկ բարբառով խօսել:

Մ Կ Ի Ճ

Ներաղութիւն, հրամանոց կիրա-
ւիառ խօսիլան, երդան շորան, պէտկա
որ տիւ հոքւորական իլէս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Ուրեմն դու ինձ չես ճանաչում:
Ես եմ Մէնգիմնան:

Մ Կ Ի Ճ

Ս. «մինդրուա»-ն տի՛ւ էս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Մէնգիմնա, Մէնգիմնա: Ինձ աշ-
խարհն է ճանաչում: այստեղից Ղարս,
Հին-Նախիջևանից մինչ Նոր-Նախիջևան,
Թիֆլիզից-Թաւրիզ, իսկ դու չե՞ս ճա-
նաչում ինձ: Ռա-մէն-գիմ:

Մ Կ Ի Ճ

Հաքի՞մ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Հողւոր խրատներով հողւորական
եմ, մարմնաւոր փորձառութեամբ աշ-
խարհական: Գուցէ դու հիւանդ ես:

Մ Կ Ի Ճ

Սխալ չես: Իմ հոքիս ա՛լ հանց
մին փիստիլիդ տակտիլէր իլա՛ծ ա՛:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Խնդրի՛ր Տէրին և նա կօգնէ քեզ
միջօրէին, հաւախօտին, կէս գիշերին և
էլի ուրիշ-ուրիշ շատ-շատ բաներ:

Մ Կ Ի Ճ

Շնորհակալամբ, մին բալաջա պա՛ն
ա՛լ մէք ինք խնթրալ, ծեռաց հասա-
ցրուց:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

(Զախ ձեռով բռնելով Մկիճի ու-
սից). Այո՞, ա՛խ, ի՞նչ բան:

Մ Կ Ի Ճ

(Յոյց տալով իւր ճակատք). Հիւնչ-
րիւ իստէ ամ խրվալ, աւել չէ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

(Ոգեւորւելով). Եւ ի՞նչ է այդ բաղ-
դաւորութեան անունը:

Մ Կ Ի Ճ

Մէր լիւղիւով տնօրովիլ կասան:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

«Տնաւորե՞լ: Ուրեմն ճշմարիտ դու
այս գիշե՞ր ամուսնացար:

Մ Կ Ի Ճ

Ուրեմն ղուռնի ծան չես լիսա՛լ:
Մաշալան նոր հանգացուրի:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Այժմ դու իմ աչքումն Արարատ
սարիցն էլ բարձրացար: Այժմ դու հա-
մաշխարհային ընտանիքի անդամը դար-
ձար: Շնորհաւոր, շնորհաւոր: Ով շի
տարեկան ժամանակը չ'սպակեց, իմ
աչքում նա աւանակ է:

Մ Կ Ի Ճ

Ուրեմն հրամանքդ տնօրվա՞ծ էս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Ո՞ւր է որ, ո՞ւր է որ:

Մ Կ Ի Ճ

Մաղերդ սիպտա՛դա ծ, մուրուքդ
չալացած, քանի՞ տարական էս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ես 52 տարեկան եմ: Գիտե՞ս ինչ
կայ: Աստուածանից ծածուկ չի, քեզ-
նից ի՞նչ ծածկեմ: Դու էլ իմ հայս ես:
Ես սիրահարուած եմ մի կնոջ վրայ և
սպասում եմ, որ նրա ամուսինը մեռնի.
Հէնց որ մեռաւ,

Մ Կ Ի Ճ

Ծէր զուռնաները կ'փիչվա՛ն (Ծի-
ծաղորմ եմ): Բա՛ս նրա մա՞րթը քանի
տարական ա:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Նա 55 է:

Մ Կ Ի Ճ

Բա՛ս հաշուվ տիւ ա՛լ իրէք տարի
նրանա ետով մեռնելի միտք ունիս: (Ծի-

ծաղորմ եմ): Բա՛ս պարուն Մինգիմ-
մինուա, մարթ ալ կուս ախիդի թողա-
ցած՝ փըսակված կնդա քամակա կընգնի՞:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Բայց ես վատ միջոցի չեմ գիմում:
Ես համբերութեամբ պէտք է հասնեմ
այդ բաղդաւորութեան:

Մ Կ Ի Ճ

Ուրամը քեզէտի փսակվիլի բախ-
տօրութի՞ւն ա:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Օ՛, ոչ թէ միայն բաղդաւորութիւն,
այլ և ուրիշ ուրիշ շատ-շատ բաներ:

Մ Կ Ի Ճ

Կլխիս մի ա՛նա՛նց պա՛ն ա եկար,
քի ա՛գա՛նա՛մ քեզ պատմամ, կլխիթ
մաղերը բիղբիղ կ'կաննան: (Կողմ).
Ախ մի՛ն կարի կնդանս տրա կլխին կապի,
դա՛րդիս չէր իլիլ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ի՞նչ է պատահել, այ թշուառ,
դու ինձ վախեցրիր:

Մ Կ Ի Ճ

Ա՛ս քիչէ փսակվալ ամ, ա՛ս առօտ
ուղու՞մ ամ ճօ՛կվա՛մ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ապահարզա՞ն:

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ (Յես յես է փսխշու՛ւ):

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ա՛, այստեղ ապահարզանի հօտ է
գալիս. (Մկիճը ձեռքերից հօտ է ա-
նաւը): Անդգամ կին, ուրեմն ձեր ամ-
բողջ ազգը խայտառակվում է: Դուք
մե՞ծ ազգ էք:

Մ Կ Ի Ճ

Շատ մեծ. (Մաւերի վրայ հաւնա-
րելով) Ես ամ, մէրս ա, հէրս ա, մին

ա՛լ քիւրիս: Ձորս հօքու անք: Ա՛ս եքքա՛-
ազգի անըմը կոտրվում: Հրամանք[ժ
ա՛ս պա՛նիմի ինձ քեօմա՛դ արա՛, քեզ
քեօմեա՛դ անիլն ա՛լ ի՛մ ցէքիս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Դուրս քցել անզգամին:

Մ Կ Ի Ճ

Ես ալ ամ ասըմ տիւս կա՛յ, կորչի,
քինայ հօրանց տուն. համա դէ հինչ-
պէ՞ս: Օրանքան կլօխս պա՛ն չի տիւս
պերըմ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Օրէնքը (ցոյց տալով իւր փայտը)
ա՛յ: Դու ի՞նձ խօսք տալի՞ս ես՝ ինձ
օգնելու:

Մ Կ Ի Ճ

«Էջը էշին պարտկ կ'քօրի»: Մեք
ալ մին մարթի տղայ անք:

332-2003

(5234/38)

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Իմ սիրածս քո աղջիկ պարոնդ է,
Աբրահամի կինը....

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ Առունս կը խովս տուրաւ, սե
սիւտա՛գ չամ ճօկիւմ, տայ հի՞նչ սոյբա՛ծ
էր... նրա աղը-հաղը իմ աշկըս չի՞ քո-
ռացնիլ... խամուշ, եալաշ Հ՛ը, հա՛նց
ա՛ս բաշբալի մէջը ինձ քիցօղը նա՞ չի
իլա՛ւ Լա՛ւ էս անրմ, շատ լա՛ւ. ցէքի՛ծ
մէջտեղովն ա կա՛մ, Մէնդիմուս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Ես քեզ մարդ իմացայ:

Մ Կ Ի Ճ

Ետղւը չես. արխային կաննի քի
նայ ալ իմ ցէքիս: (Խորհրդաւոր) Ետով
Շիւշա՛ն աղաբաջիս սագլա՞ս ա:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Յոյս ունիմ 52 աարվայ աղօթք-

ներս (ցոյց տալով երկինքը) վերջը նրա
ալանջին հասնի:

Մ Կ Ի Ճ

Օ՛, ես նրան շատ լաւ կ'ճնանչամ:
(Կողմ) Հիմի ա՛մ ըմանըմ քի շա՛պա՛տի
տակին կը խին հօրանց տունը հինչի էր
մահնա անըմ: (Փոխելով եղանակը)
Բաս օծի կլօխը հի՞նչպէս չախ անանք:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Յանցանքը այնտե՞ղ չէ:

Մ Կ Ի Ճ

Հո՞վ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Մեղքը, չէ՞ որ նա անզգամ է:

Մ Կ Ի Ճ

Հասկանըմ ամ հրամանքի՛ծ հինչ էս
շարագըրըմ: Համա պանի՛ տայ ա քի
նրանըմը մեղք չկայ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Այս այ եղօպօս, բաս ինչո՞ւ չէիր
օխտը չափում մին կտրում: Որ մեղքը
քեզանումն էր, դուրս եկաւ, որ սա
սրբապղծութիւն է, անառակութիւն է,
օրէնքը ոտնակոխ անել է և էլի ուրիշ
ուրիշ չատ-չատ բաներ:

Մ Կ Ի Ճ

(Կողմ): «Հաչող շունին քարն էր
պակաս»: Ուրեմն զարար չունի, հրա-
մանքթ ալ իմ վերաս յուս չի տինի:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Կարելի է ես լաւ չհասկացայ.
խնդրեմ մէկ պատմես:

Մ Կ Ի Ճ

Ուղօրմի քու հօրը: Մին էրկսւ ա-
միս տրանայ առաջ իմ աչկս ընդալ էր
Անթառան անըմով մին ախշիգ կայ,—
նրան: Ուղու մի իղինքիս մին քիչ նրան
Մօտացունամ: Պա՛նի ինդէ հասաւ, քի

իրէսիս մըռօնը թափվեց, հայա-աբուռը
ծալեցի տիրի մին գիւս, բօշաթունը վիզ
վէ կալայ, ծա՛նի քիցեցի ապերիս անդօլը:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

Այդ ապերը ո՞վ լինի:

Մ Կ Ի Ճ

Հրամանոց սիրականի մարթը, քի
ինքի քեզանա մեծ իլի, կնիգի ինձա-
նայ ջահիլ: Հա. նա ի ասըմ: Պերանս
պա՛ցիլի, պա՛նի կլօխ կա՛լի մին իլա՛ւ:
Իւրիւգիւնիւ ասեցի, քիչէրը փսակս
կլօխ պերին, սիւրիւն—ա՛գա՛նա՛մ, օծի
ճուտին փթաթեցին վիզիգիս: Դէ հրա-
մանքդ մուրուքիթ երգանթունան տես-
նըմամ քի փիլիսօփի ես մնան: Յիքը
արա՛, տե՛ս, ա՛գա՛նա՛մ իստէ մին ֆ՛անգ
չկայ, աս հարսանիքի հի՞շի ին չալա-
չաշխուն կլօխ պէրըմ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ.

(Յանկարծ). Ճակատիս լաւ նայի՛ր:

Ինձի կասեն Մէնգլիմաւ, այսինքն՝ մտա-
ծի՛ր, գտի՛ր, Ռաբբի։ Օրիորդ Անթառա-
մը քո ի՞նչը լինի։

Մ Կ Ի Ճ

Ախ, նրա օրընօրթ տունը, տղա-
մարդ Քիրիստօսը քանդի. իսկի հինչիս։

Մէն-ԳիՄ-ՌԱ.

Մտածի՛ր, գտի՛ր, Ռաբբի։ Այս ա-
մուսնութիւնը լուծելի պէտք է լինի,
որովհետեւ չհասութիւն կայ, այն էլ մեծ
չհասութիւն։

Մ Կ Ի Ճ

(Ուրախ) Հրամանքթ շատ լա՛ւ էս
մարքարդաշարըմ, մեծ չհասութիւն կայ։
Ինքիթ հիսաք արա՛։ Շուպպանիգա՛նց
ճիւղպէրողը նրանց-չինի ճաղացպանի
փիստիգ տղի մե՛ծ հօր սե էշչա՛գի
տսպրակը տա՛րմա՛ն լիւցնող Մարկոս ա-
մուխ մահակով փափաղը կարողի տղի,

Սառան-խալի տալօնչ զանքօշի մարթի
հանօր տղան ա։

Մէն-ԳիՄ-ՌԱ.

Ձուր բերողը մէ՛կ (մասերի վրայ
հաւնրեղով), սե էշը երկու, տոպրակը
երեք, ջաղացպանը չորս, Մարկոսը հինգ,
Սառանը վեց, փափախկարողը եօթն։
Սրանցից սե էշն ու տոպրակը, փափա-
խըն ու մահակը դուրս եկած, մնում է
3 պօրտ. ուրեմն այդ պսակը լուծելի է։

Մ Կ Ի Ճ

Նա ալ ասամ, քի տրանց չիմիգա՛ն
իմ ճնանչըս սե էշն ա։ Մին օր ու-
ղումի վէլլամ վէրա՛, նա ինձ մի՛ն թա՛-
փիգ, ես իւրա՛ն մի՛ն դա՛գա՛նա՛գ։ (Ծի-
ծադուռ եմ)։ Շուներ չան ոտը կոխ չի
տալ։ Տե՛ս ա՛ս պա՛նի կլօխ պէ՛ր, քու
պա՛նիթ ա՛լ իմ ցէքիս։ Մախ չտա՛ս հա՛։

Մէն-ԳիՄ-ՌԱ.

Այս հարցում երեք բան է հար-

կաւոր, — խորամանկութիւն: զգուշութիւն, վարպետութիւն ու էլի ուրիշ ուրիշ շատ-շատ բաներ: Չ'մոռանաս այդ:

Մ Կ Ի Ճ

Պահ: Տա հիշնչ խօսք ա, բա՛գա՛քու ա՛մա՛գիթ իմ աշկս չի քօռացունիլ (կողմ) հինչպէս քի իմ ա՛մա՛գիթ քու աչքդ քօռացրուց:

Մէն-ԳԻՄ-ՌԱ

Թէեւ ապերկդ ականջները երկար եմ տեսնում, բայց մեր համբերութիւնը աւելի երկար կ'լինի:

Մ Կ Ի Ճ

Չ'հասկացայ:

Մէն-ԳԻՄ-ՌԱ

Չէ՞ որ մեծ ականջներ ունեցողները շատ կապրեն:

Մ Կ Ի Ճ

Կափրէշապերը կեալիս, մարթի անգոյր թող իլի լալի գա՛ղիկէս: Տիւնա ասա՛ քի աղվակատի մօտը քինա՛մ, եօխսա տէրտէրի:

Մէն-ԳԻՄ-ՌԱ

Դէ հիմի լի՛ր քեզ ինչ եմ ասում: Ամեն բան ես ինձ վրայ եմ վերցնում: Դու հէնց քեզ հակաճառողին այդ ասա՛, «ինչո՞ւ ստամբօլցի Բաղդասարի համար կ'լինի, ինձ համար ոչ»:

Մ Կ Ի Ճ

Ուրամն Ստամբուլումը ա՛թա՛նց պաներ իլի՞մ ա՛:

Մէն-ԳԻՄ-ՌԱ

Երևի լինում է, և եղել է, որ ես քեզ ասում եմ:

Մ Կ Ի Ճ

Տա լա՛ւ իլա՛ւ, «Հինչի՞ Ստամբուլ-
ցի Բաղդասարի հետի կիլի, ինձ հետի
չիլիլ: Ախ, հինչպէս ամ փէշմանալէ
Բալի ա՛: Մե՛ք ալ ասեցինք մին մարթի
ջա՛րդ ընդընանք, լա՛ւ ընդանք: «Ընդ-
նողը լա՛ց չի իլիլ» ասըմա: Տե՛ս պ՛անի
հօրդէ ա հասալ քի՛ Սիբիբի աշկիս
տակն ամ առալ: Որ մին պա՛ն անամ,
մա՛նա՛դ չա՛ն խրկիլիւ, կնգանս ալ հետ-
նաս չան խրկիլիւ քի, թո՛ղ մա՛նա՛դ
խըրկան, լափ Սիբիբ չէ քի, մին քիչ
ա՛լ տա՛ն,—Պէտըլբօրս:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Դէ որ Սիբիբը աչքի տակ ես ա-
ռել, լաւ որ դանակը իրա փորը չես
խրել:

Մ Կ Ի Ճ

Հա՛հա՛հա՛: Նրան ա՛նա՛նց չ՛ճնան-

չես հա: Տէրտէրի առաչին դեօլիս
տախտակին մին գիրսա՛նդ կուպցուց,
քի քիչ մնաց ոտերս կլխովս շուռ տայ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Հէնց եկեղեցու մէ՞ջ:

Մ Կ Ի Ճ

Եղեցին մեր կլխան կտրվալ էր,
փտակս թուռդուրի վէրա՛ ա՛ իլա՛լ:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

(Կողմ) Զ՛լինի սրան ձեռ ենքցել:
(Մկիճիկն) Մօտներդ չա՞տ մարդ կար:

Մ Կ Ի Ճ

Ապերս էր, իւրան կնիգի, Մար-
տիրոս տպերը, Մարթա-աղաբաջին,
ոսղաթի շինէլ կեցած սօղուշս, իրէսը
վէր արած տէրտէրը, մին ա՛լ մին հա-
չասախկալ տէրացու: Տեսած կա՞ս քի

տէրացուն չա՛նա՛ն վէր անի, կոխկերքը
պահի:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

(Կողմ) Յնդած է եղել թէ ինչ է,
չեմ հասկանում: Պէտք է այստեղից
հեռանալ (Մկիճիկն). Յոյս ունիմ որ
ինչոր այստեղ խօսեցինք, մէկ մենք
կիմանանք, մէկ էլ Աստուած:

Մ Կ Ի Ճ

Արխային իլի՛ր քի՛նայ ալ իմցէքիս:
Հա ասեցիր հի՛նչ տամ տիւս կա՛յ, կորչի,
քինա՛:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

Ապահարզան:

Մ Կ Ի Ճ

Այ, ցոյցատեւորս իստէ իլէր մին մէ-
ջին կերի հա: (Կրկնեցով, ինքնիշխան)

Հաբինարզան, հաբինարզան: Ապտէկը-
մը կիլի ա՛լի, քանի՞ կոպէկին բօլա:

ՄԷՆ-ԳԻՄ-ՌԱ

(Յեճ-յեճ զնայով) Տասը կոպէկի,
տասը կոպէկի:

Մ Կ Ի Ճ

Լափ քսան կոպէկըդ ամ ըռըխովը
քիցիլիւ: Թող խմի, տիւս կա՛յ, կորչի,
քինա՛յ հօրանց տուն: (Մենզիւնուսի քա-
շուէրով անյեւանութիւն է):

ՏԵՍԻԼ 3.

Մ Կ Ի Ճ Ո Ի Շ Ո Ի Շ Ա Ն

Շ Ո Ի Շ Ա Ն

(Մտնում է ճախ կողմից ու Մկի-
ճի ետեւից քղաւում) Դու մէկ ինձ
ասա՛ տեսնեմ, ո՞րտեղ ես կորել: Քեզ
վնասելուց մեռանք: Հարկաւոր դոր-
ծերը ինչո՞ւ ես թողել, փախել, այս-

տեղ կանգնելէ Միաբոյ ի՞նչ է, ասա՛
 էլի, խօսի՛ր էլի, ի՞նչ ես պապանձիլելէ

Մ Կ Ի Ճ

(Որ վախեցել էր, խաղաղիւմ է):
 Իմ կօրծս ա՛լ հարկօօր կօրծ առ

Շ Ո Ւ Շ Ա Ն

Հա՞. էնդուր էլ պարտեղ ես փա-
 խել հա՛: Զլինի գործդ ծառերի հետ
 է, չէ ծառերի կ'լինի, թէ աստղաբաշ-
 խութեամբ ես պարապում: Հ՛ը. եր-
 կինք նայի՛ր տեսնենք, ինչպէ՛ս ես կար-
 ծում. աշխ կլինի, թէ մորեխ, անձ-
 րե կըլինի, թէ կարկուտ, պատերազմ
 կլինի թէ ժանդախտ, պոչաւոր աստղ
 կերեի թէ երկրաշարժ կըլինի: Ասա՛
 էլի, խօսի՛ր, ի՞նչ ես ասիշել:

Մ Կ Ի Ճ

Ես կռե չսիրող, տիւիզիդ կռիւր
 փողով առնող:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Քոռացնի քո աչքերդ մեր աղ ու
 հացը:

Մ Կ Ի Ճ

Քօռացուրալ ա քի ա՛ս օրն ամ ըն-
 դալ ալի:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Տեսնիւմ ըսա՞ն է, հարսանիքը կա-
 տարվեն և փէտի փախչելը մէկ լինի:

Մ Կ Ի Ճ

Զէք տէսաւ, տեսցէ՛ք:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Ո՞ր պատմութեան մէջ ես կար-
 դացել այդպիսի բան: Զէ, դու մէկ ինձ
 ասա՛ տեսնեմ, ո՞ր պատմութեան մէջ
 ես կարդացել, հը ո՞ր պատմութեան:

Մ Կ Ի Ճ

Հի՞նչ պատմութուն է՝ Տէր մեղայ
 Դեղ Դրխտօծ Աստօծ հա:

Շ ՈՒ Շ Ա Ն

Այ Գրիստոսը խռով կենայ յիմար
դւլիւիդ հա: Զիդի հարսիդ աչքը ջուր
կտրվեց, իսկ դու փախել ես Ադամի
նման ծառերի ետևում թաք կացել:

Մ Կ Ի Ճ

Զիդի հարս ասես, թողնե՞ս: Մեր
բաղդին բաղդ չի հասնիլ, մեր փառքին
փառք չի հասնիլ: Տիւ իլիր իմ տեղս
ոտով Հնդստան կ'փախչի:

Շ ՈՒ Շ Ա Ն

Փախի՛ր, փախի՛ր տեսնեմ ո՞ւր ես
փախչելու: Երբոր արդարութեան կշի-
ւը մէջ տեղ կըդայ, էն ժամանակ կը
տեսնենք, թէ փախչողը ինչ պատժի
կ'արժանանայ:

Մ Կ Ի Ճ

Տէր մեղայ Գեղ, պէրանս հինչ էր
եկալ հա:

Շ ՈՒ Շ Ա Ն

Մարդկանցից փախար, Տիրօջ դա-
տաստանից ինչպէ՞ս ես փախչելու, խո-
սի՛ր էլի, անամօթ:

Մ Կ Ի Ճ

Կօնիեա՜ տիւ մի՛ խօսիլ:

Շ ՈՒ Շ Ա Ն

Ե՞ս չ'սօսեմ, ես, որ ջուրը տարած
հարսիդ քողը կապողն եմ եղել:

Մ Կ Ի Ճ

Այ քըշկըռ ընդհէր, ո՛չ պարով կա-
պած իլիր հա:

Շ ՈՒ Շ Ա Ն

Լեզուդ պապանձվի, տեսնո՞ւմ էք
համարձակութեան, տե՛ս ինչեր ասաց,
տե՛ս ինչեր ասաց:



Մ Կ Ի Ճ

Հա՛լա՛ նրանայ ծանդը խօսք ունամ
քեզ ասեւի. տիւ հօրդէ՞ էս:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Հա՞. ո՞վ որ չասի. դէ ասա՛ էլի:

Մ Կ Ի Ճ

Իւրիւնները չան ըմանում, ախր մեք
տակն ալ անք ըմանում, տիվէրն ալ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Ի՞նչ էս իմանում:

Մ Կ Ի Ճ

Շա՛պա՛տի տակին կլխին հօրանց
տունը մահնա անող Շիւշա՛ն աղաբա՛լին
չէ՞ս:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Ախ լիւրփ, անդգամ, վայրահաչ,
զըպարտիչ:

Մ Կ Ի Ճ

Ես ապէրին սղա՛ներ խա՛բա՛ր տամ,
քի վիղակովի մաղէրը կաննի: Բա՛ս:

ՏԵՍԻԼ 4.

ՄԿԻՃ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍ

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

(Ձախից գալով) Էդ ի՞նչ յիմարու-
թիւն է որ փախել ես, էդ ի՞նչ բաղ-
դաւորութիւն է որ գտնվել ես, էդ
ի՞նչ խայտառակութիւն է որ չես գա-
լիս: Այստեղ ի՞նչ էս անում:

Մ Կ Ի Ճ

Իսկիւ Աղ-վակատի մօտ ի եկալ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Հա՞, տեսա՞ր իրան. ի՞նչ ասաց,
ի՞նչ արաւ:

Մ Կ Ի Ճ

«Տանձը հի՞նչ արաւ, քի կօթը
հինչ անի»:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Այ տղայ, տաւար, Ապերդ քիչ է
մնում անմահանայ, իսկ դու այտաւդ
ինչ խայտառակութիւն ես անում:

Մ Կ Ի Ճ

Ախպէ՛ր, տիւք հա՛նց մեր արածն
էք մէջտեղ պերըմ, իսկի ծէր արածան
չէք խօսըմ:

Շ Ո Ի Շ Ա Ն

(Մկիճիճ) Շատ չե՞ս ըռէխդ ճօթ-
ումմ:

Մ Կ Ի Ճ

Ա կնիդ տի՛ւ ինձանա հինչ ես
ուղում, փիա՛:

Շ Ո Ի Շ Ա Ն

Քեղանից նա եմ ուղում, որ խեղճ
հարսիդ տէր ու տիրական դառնաս:

Մ Կ Ի Ճ

Մինիդ հա՛լա՛ տիւ քու պառաւիթ
տէր տիրական իլլ՛ր, ետով կ'խօսանք:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Արի՛ Մկիճ, փեշիդ քարերը վե՛ր
ածա, սատանայի ձիւց վե՛ր եկ:

Մ Կ Ի Ճ

Չամ ուղում: Ախպէր կնիդի իմի
չի՞, չամ ուղում ալի, փիէ:

Շ Ո Ի Շ Ա Ն

Տեսնո՞ւմ էք, սա մեր գլխին ինչ
նեղութիւն է բերում:

ՏԵՍԻԼ 5.

ՄԿԻՃ, ՇՈՒՇԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍ ՈՒ ՄԱՐԹԱՅ:

Մ Ա Ր Թ Ա Յ

(Մտնելով ձախ կողմից, բռնում է Մկիճի փեշից): Ա, բռնել էք հօ. էլ ինչո՞ւ էք կանգնել, քարշ տուէ՛ք անսպիտանին, քարշ տուէ՛ք երգումը ոտնակոխ անողին, քարշ տուէ՛ք ըմբօսումին (Մի ֆանի անգամ պտտացնում է նրան):

Մ Կ Ի Ճ

(Ազատելով): Բրախ տո՛ւր տէսնամ: Տի՞ւ իր պակասը, հա՞, տու ա՛լ պարով եկար:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ընկի՛ր առաջ, ընկի՛ր առաջ, անօրէն, ընկի՛ր առաջ:

Մ Կ Ի Ճ

(Մարտիրոսին) Զիւի՞ւ կնգանթ կապը մին քիչ քաշէս:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ընկի՛ր առաջ, մինչեւ մահդ տէր ես, պէտք է տէրութիւն էլ անես:

Մ Կ Ի Ճ

(Կողմ) Սիպտա՛դ եզնը վեր ընկաւ, տա՛նա՛դ օօրները շատացան:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Էս գիշեր մօտ երկու հարիւր անգամ ես թագաւոր-թագուհու կենացը խմեմ ու թագաւորը այնուամենայնիւ փախչի՞:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Զէ՞, մին հարցնող լինի, թէ օտարները ինչ կասեն:

Մ Ա Ր Թ Ա Յ

Էդուց-էլօր աղջկատէրերը չե՞ն գալ, չե՞ն ասիլ, թէ «ձեզ աղջիկ ենք տուել, ո՞ւր է սրա մարդը»:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Գիւղացիները մահակներով մեր
գլուխները կ'շարդեն:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Գլիրը խանչալ չ'հանի, մեծ բան է:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Կոպիտ գիւղացիներ, կօկօրդներին
զօռ են տալու, թէ «մունք ծըէլ ակս-
չիդ ընք տուալ վէր բիյաբուռ ընէ՞ք»:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ի՞նչ են իմանալու, որ մեղքը
(Մկիճը ցոյց տալով) այս աւանակումն է:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Գլիրը խանչալ է հանելու, տրէ-
խով գետնին խփելու թէ «ըմ՛մ»:

Մ Ա Ր Թ Ա Յ

Մարդ եմ ասում, նրանց կռուկոռո-
ցին գիմանայ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Ես կ'փախչեմ զանգակատուն:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ես կ'մտնեմ ծովի տակը:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Գլիրը խանչալ չ'հանի, մեծ բան է:

Մ Ա Ր Թ Ա Յ

«Խեղօք, տնարար, ողջ, առողջ,
անող, եփող, թափող, հաւաքող, դար-
սող, մաշինի վրա կար անող Անթա-
ռամին թողել էք» կասեն, «էս կոպիտ
անասունը խոյտառակի»:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Էդ բոլորը ոչինչ. խեղճ Աբրահամ
ապերի լեզուն կտրվել է. եթէ էդ պա-
տը կ'խօսի, նա էլ կ'խօսի:

Մ Կ Ի Ճ

Ի՞նչ խմի լիւզիւն տեղումը կաննի.
Ես հօինչ անամ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

(Մկիճիկ) Ուրեմն ամուսինս հար-
բեցող է:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Բըռնել է գլուխը, երեխի նման
լալիս է «ու ու ու» ասում է, «Ես ան-
ղաւակ մարդ» ասում է. իմ հոգեւորդի
Մկիճը այսպէս բա՞ն» ասում է. «Ես ու-
ղում էի իմ հարստութիւնիցս մի կոպէկ
էլ աղդին չ'տալ» ասում է. «այլ բոլորը
թողնել իմ ձեռքովս սրակած Մկիճին»
երիտասարդները—ասում է այդ ամենը
կաղէթ են քցելու» ասում է:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Վայ իմ ջուրը տարած, վայ իմ
գլխիս տէրը:

Մ Ա Ր Թ Ա Յ

Հարիւր վաթսուն մահակաւորնե-
րին մենք ի՞նչ պատասխան պիտի տանք:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Գլխը խանչալ չ'հանէ, մեծ բան է.

Մ Կ Ի Ճ

(Կողմ) «Անանց քի ես իմ շալվա-
րիս ա'մ, միտիդ անըմ, ա'ս տարի մեզ
էտի Զատիկ չի իլիլիւ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Արի՛ փէշիդ քաբը վե՛ր թափիր,
Մկիճ տղայ: Տղամարդ ես, գլխիդ գը-
տակ է դրած, խօսք ես տուել, խօսքիդ
տէրը դարձի՛ր:

Մ Կ Ի Ճ

Էշ վէլլիլի մին ամօթ, վեր կա՛լի
էրկու: Ես իմ խօսկաս փախչողը չամ,

Ես ասալ եմ կնդանսանա ճեօկվիմամ,
ճեօկվիւլիւ ամ ամ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Ուրէմն էլ ես ոչինչ: Դէ համե-
ցէք դու մէնակ գլխի խանչալին գի-
մացի՛ր:

ՏԵՍԻԼ 6.

ՄԿԻՃ, ՇՈՒՇԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍ, ՄԱՐԹԱՅ
ԵՒ ԱԲՐԱՀԱՄ:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

(Ձախ կողմից) Թոյլ տուէ՛ք, թոյլ
տուէ՛ք, ո՞ր թոյլ տուէ՛ք սրան մի լաւ
անիծեմ:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ձեմ թոյլ տալ: Ձէ: Մարդ է, մահ-
կանացու է, ամենքս էլ մահկանացու
ենք. դուցէ զղջալու է:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Վայ իմ գլխիս տէրը:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

(Շուշանին) Համբերութիւն արէ՛ք
ի սէր Ասածոյ: (Մկիճին) Չոքի՛ր, մե-
ղայ եկայ քեզ հաց տուողի առաջ:

Մ Ա Ր Թ Ա Յ

Ուղարկ նման չոքի՛ր:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Չոքի՛ր: Թողէ՛ք չոքէ:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Թողէ՛ք ինքը խօսի: Խօսի՛ր անդգամ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

(Մկիճին) Մի՛ սպանիր խեղճ ջուր
տարածիս. մեղայ ե՛կ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Ի՞նչ կ'լինի մեր գրութիւնը, եթէ
գլխիւր խանչալ հանի:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Ի՞նչ գողեր:

Մ. Ա. Բ. Տ. Ի. Բ. Ո. Ս

Աղջկայտերով գիւղի գողերը: Չէ՞
որ նրանք մեզ վրայ կռւի կըդան:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

(Մկիճին) Ո՞վ պէտք է աղատի
մեզ էս կրակից: Խօսի՛ր էլի:

Մ. Կ. Ի. Ճ

Ապեր, ես քեզ խնդրեցի հացիս
ե՞ղ քիսես, եօխսա սխտոր:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Ի՞նչ, Ի՞նչ Ի՞նչ:

Մ. Կ. Ի. Ճ

Ապեր: Աս կանգալախոր հանց իմ
ոտիս էտի իր պահա՞լ:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Ի՞նչ է ասում անդամը:

Մ. Կ. Ի. Ճ

Ապեր, ես լիտա՛լ ի քի «բալթան
խւրա՛ն կօթը չի՛ տաշիը»:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Յետո՞յ:

Մ. Կ. Ի. Ճ

Ապեր, «զոնթիդի, առաչի կլխան
խւրա՛ն կօթին կ'պահի»:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Լաւ. յետո՞յ:

Մ. Կ. Ի. Ճ

Սուտ չան ասալ քի ծիւգնի կլխան
կ'հօտի: Շնորակալ ամ է՛. շատ, շատ,
շատ շնորակալ ամ: Լաւի լիացայ:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Ուրեմն վա՞տ հարսանիք եմ տուել:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

«Ձի տեսել պատիցը կախ, տես-
նում է ճակատիցը կախ»:

Մ Բ Ր Ա Հ Ա Ս

Ուրէմն ես քո վատդ էի ուզում:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Անօրէն:

Մ Կ Ի Ճ

(Ծնունդն աշխարհի Մարտիրոսին, խօս-
քն ուղղելով Արարիկին) Լաւիս իր
ուղում եօխսայ վատիս, չամ մանրմ,
համա դէ չորս ոտով լաւ կլօլեցիք ինձ
թաւի մէջ: (Շուշանն ու Մարտիկ ծի-
ծաղորդն են). Ծրծաղեցէք, տիւր ծը-
ծաղեցէք իմ վերա՛ս: Ճիւրբումը թրք-
վածը անձրեան չի՛ վախիկ» ծրծաղեցէք:
Փառք Աստու. կնանիքոնց Աստուծ հա՛նց
մին ծրծաղիկի շնորք ա տուրալ, շախ-
կարա տուրեցէք, հայա աբուռ մու-
ցէք, հահուոց տուրեցէք: Փսակիս քիչ

էք ծրծաղալ, պակասը իստէ դիւղա՛թմիշ
արեցէք: Տա ցէխի մէջը ընգածին ցէք
մէկնիլ հանիլ չի, քի ծեր ցէքան վեր կա՛յ,
տա հաւայի ծրծաղ ա: Ծրծաղեցէք հինչ-
քան քէֆներթ ա, տեսնում ամկա՛րիներթ
չոր ա ընգալ. (Նրանց ծաղրելով) «Հա,
հա, հա, հիհիհիհի, հէհէհէհէ, քքքքքքքք:
(Մարտիրոսին որ նոյնպէս ծիծաղորդ
է, ցոյց տալով Շուշանը ու Մարտիկ):
Ա՛ս հէփած հաւերը քրքչամ ան, տիւ
հի՞նչ էս խրխնջամ. երբա՛ մարթ, քէզ
չանք ճնանչը՞մ:

Մ Բ Ր Ա Հ Ա Ս

Չհամարձակվես իմ բարեկամիս
պատւին կպչել: Լեզուդ վզակոթիցդ
հանել կ'տամ:

Մ Կ Ի Ճ

«Յարգա յարգաց, պատիւս արժա-
նուորաց»: Ես լա՛ւ ա՛մ՝ ճրնանչըմ իմ
մարդկերանց: Թող նայ ալ իւրան պա-

տիւր Հասկանայ: Թո՛ղ նայ ալ մե՛ր
հրամանոց վերայ չ՛ծրծաղի: Բա՛ս, նե-
սըմը քահանայ, տիւսիւմը սըտանայ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Ո՞վ, նա՞, ի՞նչ: Ներողութիւն
խնդրի՞ր:

Մ Կ Ի Ճ

Հրամանէրէս. Ա՛ն ճիւրա՛ն վախա-
ցի՛ր, որ ոչ կ'իշխէ, ոչ կ'ստիպէ:

Մ Ա Բ Տ Ի Բ Ո Ս

«Ինքը չ'կայ թիւ ու կէս, խօսքեր
ասաց դա՛ղուկէս»: Արդե՛ղ գի՛ր, ա-
տա՛մները աչքերից թափեմ:

Մ Ա Բ Թ Ա Յ

Հանդարտվեցէ՛ք լա՛ւ: Ամեն մա-
ծուն ուտող կատուին չեն սատկացնիլ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Անասուն, քեզ չե՞մ ասում ներո-
ղութիւն խնդրի՛ր:

Մ Կ Ի Ճ

«Բիղի գլխին քացի տալ չիլի»: «Ճարըդ հի՞նչ ա, ճուարան»: Ներաղու-
թիւն արեցէ՛ք պաժօլտա, որ ոտս մին
քիչ եօրդանաս երդան մեկնեցի: Ղա-
լա՛թ ա՛մ արալ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Հա՛. հիմի տեսնում եմ, որ ով չի
լիլ աղանջով, կ'լի մէջքով, քեզ հեռ
սիրով խօսալու չէ, քեզ պէտք է ծածով
բան հասկացնել:

Մ Ա Բ Տ Ի Բ Ո Ս

Դէ կորի՛ր հարսիդ մօտ:

Շ Ո Ի Շ Ա Ն

Շո՛ւտ:

Ա Ր Ր Ա Հ Ա Մ

Դէ հա. քանի տընդըզ չես կերել:

Մ Կ Ի Ճ

Ուրամը ա՛սքան կուռկուռը նշա-
նակըմէր, քի ծեղ ի՛ւրիւշ փորացաւ ու-
նէք: Ուրէմն կլխիս ա՛սքա՛ն կուժկու-
լայ կօտրիլի տրա՞ հետի էր: Ներաղու-
թիւն, հիւնչրիւ ա՛ն օձի ճուտի կլօխը
ինդէ չախչախ չանէք, իմ ա՛ս չօլախ
ոտս-ես ծէր տան դուռնով նէս տինողը
չամ: Ա՛լ բօլա:

Ա Ր Ր Ա Հ Ա Մ

Ի՞նչը:

Մ Կ Ի Ճ

Մին սխտոր էս ուտացուրալ ինձ,
քի հառուռ լիմօնատդալի խըմամ՝ չամ
մարսիլու:

Ա Ր Ր Ա Հ Ա Մ

(Ձեռքերը կրծքին դնելով): Ե՞ս:

Մ Կ Ի Ճ

Հա՛նց տիւ ա՛լ, տրանք ալ, չիմ ա՛լ:

Ա Ր Ր Ա Հ Ա Մ

Ուրէմն ջահիլ-ջիւան հարսիդ չնե-
րի ռե՞խն ես քցում:

Մ Կ Ի Ճ

Ինքի ինձ տաքացուրալ ա, ինքի
պաղացուրալ, ես հի՞նչ մեղաւոր ամ:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Ուրէմն խեղճ դառնին ուղում ես
անմահացնես:

Շ Ո Ի Շ Ա Ն

Ես լինէի Անթառամի տեղը, ես
քեզ ցոյց կ'տայի:

Մ Ա Ր Թ Ա Յ

Քարշ տուէ՛ք էլի, էլ ինչո՞ւ ենք
կանգնել:

Մ Կ Ի Ճ

Բօջիկի տակի ի մնացալ, եօխսա
կլլխիա քեօրիի ա փուլ եկալ, քի ինձի
քաշ տաս: Մէյի՞դ ա՛մ քէզ էտի՞:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Տեսնված բան է՞, որ մարդ հարս-
նեկան առաջաստը թողնի, փախչի:

Մ Կ Ի Ճ

(Մարտիրոսիկ) Կարող էք համբալ
Արզըմանին համեցէք անել:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Ի՞նչ ասեց, ի՞նչ ասեց: Ախ, զըր-
պարտիչ:

Շ Ո Ի Շ Ա Ն

Ախ չառ քցող:

Մ Ա Ր Թ Ա Յ Մ

Ախ դու Սիբիրական:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Ախ դու «անարատ», «առաքինի»:
Սա վերջը իրա կնկանը ապահարզան էլ
է տալու:

Մ Կ Ի Ճ

Նա էլ հի՞նչքան, լափ 20 կո-
պէկլուդ:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Իմ տանս մէջ, իմ որդեգիրս, իմ
անուցած, իմ պահած մեծացրածս, ա-
պահարզա՞ն... Օ՛ր կործանվեց աշխարհը,
ոտնակոխ եղան սուրբ օրէնքները, մե-
ռաւ խեղճը, վերացաւ սէրը — տիրեց
խաւարը, թագաւորեց մառախլապատը:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Կնկանը ուզում է արձակման տալ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Նեուր եկել է, մենք ոչինչ չենք լի-
մացել:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Խաւարեցին ջրհորները, պայծա-
ռացան արեւի ճառագայթները, մարդիկ
սկսեցին միմեանց ականատեսել, տղա-
մարդկանց պռուշի վրայ բեղեր բուսան,
կանանց մազերը երկարացան, վայ մեղ,
վայ մեղ, քո վարմունքով աշխարհի
վերջը դալը տանդաղացրիր:

Մ Կ Ի Ճ

Բա՛ս տի՛ւք ինձի հինչ արիք: Փա-
վաղս թողոտ տէսաք, հա՛նց ըմացաք
ճաղացական ամ, հա՞: Աստու առաչին
հի՞նչ պատասխան պէտկա տաք: Ա՛ն

արչի ախիդա՛ն կլխիս կապեցիք, որ
մին օր քնած տեղաս վերկանամ տես-
նամ կլօխս ուսերաս պուք տուրած:
Շնորակալ ամ: Ա՛նքան տէղը էչ չըմա-
նաք: Հի՞նչ էք խլըած միտիդ անըմ:
Հի՞նչ էք արմացալ-ղարմացալ: Չամ
ուզում: Կնիդի իմի չի՞, չամ ուզում
ախպէր:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Դէ որ բանը այդ տեղը հասաւ,
գնա՛ թուրքացի՛ր:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Գնա թուրքացի՛ր էլի, էլ ի՞նչ ես
կանգնել, գնա՛ թուրքացի՛ր:

Մ Ա Ր Թ Ա Յ

Խաչդ մոռացի՛ր, գնա՛ թուրքացի՛ր:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Բե՛ր երեսիդ մեռօնը քերեմ, գնա՛
թուրքացի՛ր:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Ամեն թուրքացող բէկ չի լինիլ.
գնա՛ թուրքացի՛ր:

Մ Ա Բ Թ Ա Յ

Ամեն բան հայից դուրս կըգայ,
դու ել գնա՛ թուրքացի՛ր:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Քի՛չ հայ է թուրքացել, թող մէկ
ցօնդուռն ել կորչէ:

Մ Կ Ի Ճ

Ա՛թա՛նց էք անըմ՝ քի աղկի տունը
քանդվում ա է՛: (Արտահամին) Քեզ ա-
րախայ չունես, (Մարտիրոսը ցոյց տա-
լով) դու առախայ չունի, ես թուրքա-
նամ, ա՛ն մինի չ՛փսակվի... տակին ու
տե՛րս ա մնալու:

Մ Ա Բ Տ Ի Բ Ո Ս

Էսպէս խելօ՞ք ես, ինչո՞ւ ես կըն-
կանդ ապահարզան տալիս:

Մ Կ Ի Ճ

Տէր, մեղայ Քեզ հա՛, տէր, մե-
ղայ Քեզ հա՛: Ղա՛րիւ բաշբալի մէջ
չընկա՞նք: Ծովը կիբիցա՛մ ինձ կ'իւեղ-
դամ, եկիսպոկոսին դէպէշ կ'տամ, կա-
թաղակոսին կոնդակ կիկերա՛մ: Երու-
սաղամ տէլէֆօն կանամ, էշ կ'նստամ
Ձինմաչին կ'փախչամ: Ախպէր ինձանայ
հօն էք ուղում, բարաղարդաշ ինձա-
նայ հի՞նչ էք ուղում:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Որ սատկես ել չի՛ լինի:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Որ տմկես ել չի՛ լինի:

Մ Ա Ր Թ Ա Յ

Որ մեռնես ել չի լինի՛:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Որ հաղար պատառ ել լինես, չի՛
լինի:

Մ Կ Ի Ճ

(Կարծես յանկարծ յիշեցով, յես է
խաշուռն եւ հանդիսաւոր) Շատ ալ լաւ
կիլի: Հինչի՞ Ստամբուլցի Բաղդասարի
հետի կիլի, ինձ էտի չիլի:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Երի հա՛, Ստամբուլ:

Շ Ո Ի Շ Ա Ն

Տե՛ս, լուրը որտեղից է առել հա՛:

Մ Ա Ր Թ Ա Յ

Էս բանումը Բաղդասարն էր պա-
կաս, նա էլ Ստամբուլցի Բաղդասարը:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Աչքներս լոյս. Եղովուն ել Ստամ-
բուլ գնաց:

Մ Կ Ի Ճ

(Մարտիրոսին) Ա՛խ, բարեկամը
չի քինա՛լ չի կա՛լով չարակամացաւ, չա-
րակամը քինա՛լ կա՛լով բարակամացաւ:
Մին ըմանամ քի հինչի՞ ա՛մ քո աչկիթ
փուշը իլա՛լ է՛, դա՛րդիս չի լիլ: «Մի՛
լիլ անօրան, կ'պատիժ վէս երկնասօրան»:
Վնաս չունի. հինչ որ ուղումէս, արա՛:
Ծէքաթ եկածը օխտը աման քաշի՛: «Ա-
մեն կլօր խնձօր չի, ամէն թռչուն հի-
լօր չի»:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Ինձ սպառնալիք տուողին ես այս
րոպէիս իմ վրէժից ու թոյնից կ'ղեր-
ծեմ:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Համարձակուել իմ բարեկամիս Վի-
րաւորե՛լ: Յայտնե՛լ պօլիցիային:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Ախ, Վիլից կախեւելու կատու:

Մ Ա. Բ. Թ. Ա. Յ

Յայտնենք պօլիցիային:

Մ Կ Ի Ճ

(Յե՛տ քաշուերով) Տիւր ձեւը պօլի-
ցին յայտնեցէ՛ք, ես ալ կի քինա՛մ կըն-
դըստօր իմ տէրտէրիս կասամ: Ուղար-
հինչքան սատկած իլի, կաշին մին էշի
բեռ կ'լինի: Ես ծէղ մին ա՛նա՛նց բա-
ղալաղ տամ, քի ծէր չիմիդի ա՛լ եալ-
լին շաղժի: Ինձ գիւմա՛շ-Մկիճ կասան:
Պրաշէնի կըտամ ծէր ցէքան (Մասերով
գրեղ ցոյց տալով): Քի ես Մկիճ Հա՛ճիւճ-
մա՛ճիւճովս հալ-ղաղիայ ա՛թա՛նց ա՛-
նա՛նց: (Գնում է միջի դռնով:

ՏԵՍԻԼ 7.

ԱՐԱՅԱՄ, ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ԽՕՋԱ-
ԱՐՁԸՄԱՆ:

ԽՕՋԱ-ԱՐՁԸՄԱՆ

(Աջ կողմից) Ծըէր մըսխարան պըր-
ծի՞ք ու՛շ:

Մ Ա. Բ. Տ. Ի. Բ. Ո Ս

Պակասն էլ ինքդ կ'լրացնես:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Թշերդ կարմիր է երեւում, բարե-
կամ:

ԽՕՋԱ-ԱՐՁԸՄԱՆ

Պա խէ՞. քեա՛սիբին պըրըկենթանը
չորաթանա՞ւ ա ինիւմ:

Ա. Բ. Բ. Ա. Հ. Ա. Մ

Ուրեմն լաւ քէֆ էք արել:

ԽՕՁԱ.-ԱՐՁԸՄԱՆ

Հրամանքս, խէյլա՛ զըկուճիւր
նի ածեցինք բողաղներաւս:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Ո՞րտեղ էք պաս բռնել:

ԽՕՁԱ.-ԱՐՁԸՄԱՆ

Կրասնիկովանց օդաբաշուն քշտէն:
Ամմա խէյլա՛ ծօխ ընք կօլ տուալ:

Մ Ա Բ Տ Ի Բ Ո Ս

Իզուր մեղ մօտ չ'մնացիր, լաւ հար-
սանիր ունէինք:

ԽՕՁԱ.-ԱՐՁԸՄԱՆ

Դէ ասըմա շիւղիննա՛ն մէսը մին
զզղանում էփիլ չի.

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Է՛դ էլ ես ճշմարիտ մարդարտա-
շարում:

ԽՕՁԱ.-ԱՐՁԸՄԱՆ

(Ծոծրակը փռելով). Խըղատակս
քօր ա կէամ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Փորացաւդ չեմ հասկանում:

ԽՕՁԱ.-ԱՐՁԸՄԱՆ

Հըռնուինա՛ն մէ՛կալ տարու թան-
դութէնը քա՛ցին. մհէկս բոլլուղ տարէ
եա, օղըմընք տօն հաւաքլած ինինք:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Չեմ հասկանում:

Մ Ա Բ Տ Ի Բ Ո Ս

Կնկանն է ուղում էլի:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Հա՛, կնիկդ Մկիճը տարաւ (զնու՛մ
է ճախ):

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ

Բօ՛, Բօ՛, Բօ՛:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

Քաղաք տեղ կինը սեպհականու-
թիւն չի՛ հաշուում (գնում է ձախ):

ՏԵՍԻԼ 8.

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ ՈՒ ՄԿԻՃ.

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ

(Ափշած) Բժբօ՛: Պաքաղաքը բար-
բադ ինի: Իտի էլ ադա՛թ: Էդ հօ հա՛-
նա՛դ-հա՛նա՛դ տղանա՛կ տեռաւ: (Տես-
նեղով Մկիճին, որ գալիս է մեջտեղով)
Ադա, զուռնաչու տղայ, էդ խալիսի մը-
հար մեծպաս երկուէթի, տիւ հլա՛
կնանչ-կա՛րմիւրդ ե՞տ չըս ըրալ:

Մ Կ Ի Ճ

Քո՛ւ էշիդ հով ա չօշ առալ:

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ

Էդ հի՛նչ էշչու սօհրա՛թ ա՛. ես
իմ կնէկս ըմ օղում է՛ կնէկս:

Մ Կ Ի Ճ

Ա՛րի տիւ քու կնգանդ կռիւ սկը-
սեցի՞ր: Փիէ՛, Տէր, մեղայ Գեղ հա:
(Կողմ) Ասումա «կծօղի քամադըմի կաննի,
քացի տուրողի առաչումը»: Տրանըմը
խաթայ կայ, քիցա՛ծ ա՛ իրեւմ: Պարե-
կամ, ա՛ն սրա՛նի մասին քի քեզ ալ
յայտնի ա՛, — չիւնքի հրամանքդ սօլդու-
չըս իր (կողմ), պարով չիլիւր, իմ մըտ-
կըս փոխվալ ա: Դա՛րդիս մին ինձ ա՛
այան, մին ա՛լ (վերեւ ցոյց տալով) Նը-
րան: Ասումա, էլը ինձ խօջայ ա առմ,
համա իմ հալս ինձ յայտնի ա՛: Կարե-
լի ա՛, հրամանքի ինձ երանի ա տամ,
համա չէ սխալ ես, ապօր տղայ: Մըսա-
թան քինա՛ցի տէրտէրի մօտը, շարա-
դրեցի քի հալ-ղաղիայ ա՛թանց ա՛նա՛նց,
խէյլա՛ք աջըղվեց, ոտերը տափին թա-

դեց, մութութիւնը տըմբումբացրուց։ Ասեցի
աջդ համփութում—բարով չ'համփութ-
րի—«աղաչանքս լիսի»։ Ասեց, «Քու ալ,
հարսիթ ա'լ, կնքօօրիթ ա'լ»,—հրամա-
նոց անըմն ալ չ'մօռացաւ։—«Տիւն»
ասըմա, «անօրան»։ Անճարը կերալ ա
պանջարը։ Ճարս կտրված ինդէան քոռ-
փէշման դաբանիս թիքեցի թո՛ւշ ապ-
տէկը։ Տիվէր թիքա'մ իրէսս ա, նիրքե
թիքա'մ մութութիւն ա։ Հի՞նչ անի։ Ասեցի
«պաթօյստա, մին աբասլուդ հա'բինար-
ղան տուրեցէ'ք տանամ կնդանս ըսխով
քիցա'մ, տիւս կա'յ, կորչի, քինա'յ հե-
րանց տուն։ Նրանք ալ ինդէ իւրա'նց
հօր խէյրին վերա'ս ծըծաղեցին։ Հովիս
հասնող չ'կայ։ Մէնգիւմուան ալ ինդէ
հաքիս սառուցումը տիրա'ւ։ Ասօր տը-
ղայ, տիւիգիթ շնական մարթ էս, թա-
հա'ր-թիւհիւրա'թ մեծ օջաղի որդիի
ես մնան, մեղ պէս քաղաքըմը մօդայով
չես ապրալ, քի մեղ պէս փուչացած
իւէս։ Ե'կ, տիւ ինձ ա'ս կրական հանի

հա'նց մացի', քի հօրըթ խէյրին մին քեօր-
փի ես շինիմ, մին ժամ ես շինիմ, մին
ախպուր ես կախ անըմ, մին սըմարան
ես պա'ցիմ։

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ

Էն Սարիբէգը վկայ ա, կողկաճա-
ղաւտ ինդի մհակ կաճեմ, սե շանը
ա'լիղուլի կասէս։ Ինձանաւ տնա'ղս տամ։

Մ Կ Ի Ճ

Դեօշիս տախտակին մին թա'վիդ-
կ'տինա'մ, քի խմած գինիթ ա'ն ծուռ
քիթա'թ կ'թափվի։

ԽՕՁԱ-ԱՐՁԸՄԱՆ

Ըռռէխէն եշի. հո՛ւնց ըս առռի
հօքիդ առնեմ։

Մ Կ Ի Ճ

Դէ մին փորցի'ր (քունկում եմ).
թա'նթիւլթ քե'ղ քաշի, ասըմամ։ (Նեղ-
վերդ)։ Բրա'խ ասըմ ամ։

ՏԵՍԻԼ 9.

ԽՕԶԱ-ԱՐԶԸՄԱՆ, ՄԿԻՃ ՈՒ ԱՆԹԱՌԱՄ՝

Ա Ն Թ Ա Ռ Ա Մ

(Զախից գաղով) Ուխա՛յ, ուխա՛յ,
ուխա՛յ:

Մ Կ Ի Ճ

(Անքառաւիհն շնկճոված ձայնով)
Լա՛ղա՛թ ա տամ, հա՞:

Ա Ն Թ Ա Ռ Ա Մ

Ուխա՛յ, կնկանդ կ'թողնես կը-
փախչես:

Մ Կ Ի Ճ

Ապեր, հառայ, ապեր, հառայ,
քրիստոնեա՛յ. երկու սիրականներ ինձ
անմաս արին:

ՏԵՍԻԼ 10.

ՄԿԻՃ, ԱՐԶԸՄԱՆ, ԱՆԹԱՌԱՄ ՇՈՒՇԱՆ
ԵՒ ՄԱՐԹԱՅ.

Շ Ո Ւ Շ Ա Ն

(Մեջքեղից գաղով) Խեղդեցէ՛ք
անղբամին, սրան փնտռելուց մենք մե-
ռանք:

Մ Ա Ր Թ Ա Յ

Անմաս արէ՛ք, քարշ տուէ՛ք:

Մ Կ Ի Ճ

Ապեր, հառայ, ինձ սպանեցին:
Մարդասպանութիւն, առուն, պօլիցա՛:
Թո՛ղ արարած աշխարը թափվի խոտէ:
Օր ցիրեկով ինձ ճլատըմ ան:

ՏԵՍԻԼ 11.

ՄԿԻՃ, ԽՕԶԱ-ԱՐԶԸՄԱՆ, ԱՆԹԱՌԱՄ, ՇՈՒ-
ՇԱՆ, ՄԱՐԹԱՅ, ԱՐԲԱՀԱՄ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍ՝

Ա Ր Ր Ա Հ Ա Մ

(Զախ կողմից) Բա՛ց թողէք:

Մ Յ Ր Ր Ի Ր Ո Ս

(Նոյնպէս) Պա պա պա. այդ ո՞ւմ
Թողն են բարձրացրել:

Մ Կ Ի Ճ

(Ազատելով արագ-արագ շրջում
է): Արարած աշխարհը թո՛ղ հաւաքվի
խստէ: Շահատ իլէցէ՛ք քրիստոնեայ, Չ
սիրական ուղում ին ինձ տեղպատեղ
սպանան: (Կողմ) Ղարաշութուն չանամ
պա՛ն կլօխ չի կա՛լիս: Սիպտա՛դ եղնը
լա՛ւ ա վէր ընդալ, ապեր. փափաղը
կլխին պինդ պահիլի տարի ա. Ապեր,
ինձ պա՛րցրա՛ցրո՛ւ: Վերջին դատաւ-
տանի օրն ա, ինձիգին փրկեցէ՛ք, դը-
ժօխքի կրակըմն ամ, ինձի ցէք մեկնե-
ցէ՛ք, ինձի ա՛ս աննամուս կնդան ցէքան
աղատեցէ՛ք, ինձի ա՛ս սատանի բալի
ցէքան աղատեցէ՛ք: Դա՛դ, դա՛դ, դա՛դ
քու ցէքաթ, Անթառան: (Դսակը գեհ-
նին է խփում): Թի՛ւ իմ նամուսիս:
Ե՞ս մին կնդայ ցէքի Թադվա՛մ: (Թաշ-

կինակները պոկում դեն է փցում): Էլ ես
Թա՛դա՛ փեսայ չամ: Աքա Անթառան,
ա՛րա՛դ Թունդուրի վէր՛ա—մեր գլխան
ժամը կտրվալ էր. - ա՛ս Ժողովուրդի ա-
ռաչին խօսք տուրիր մարթիթ—ոչ պա-
րով կնիդս իր իլա՛լ—հաւատարիմ իլես,
դա՞՞ էր քու հաւատարմութունդ: Այ,
բօշա, բօշի ախիդ, արանքը Թողնի՛ր
մինիդ օր ալ ա անց կանար, պլօճիդիթ
կ՛ճաքէր հա՛:

Ա Ն Թ Ա Ռ Ա Մ

Քո սիրտդ ճաքէր, որ պսակիդ գի-
շէրը չլուսացած հարօսիդ Թողել փա-
խել ես:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ

Ախր ի՞նչ է պատահել է՛:

Մ Կ Ի Ճ

Ոչի՛նչ, ոչինչ: Ես տղամարդ չամ,
պերեցէ՛ք մին լա՛չա՛դ քիցեցէ՛ք իմ կըլ-

խիս: Ես ա՛լ (Անքառաւոր ցոյց տալով)
դրա տէրը չամ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Տօ, դո՞ւ չէիր, որ երէկ գլուխս
տանումս էիր:

Մ Կ Ի Ճ

Ղա՛լա՛թ ամ արալ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Դո՞ւ չէիր, որ սիրահարուեալ էիր:

Մ Կ Ի Ճ

Կլօխս քարով ամ տուրալ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Դո՞ւ չէիր, որ շարագրանք էիր
գրել:

Մ Կ Ի Ճ

Ոչ պարով այբբէնդիմ ի սորվալ հա:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Դո՞ւ չէիր որ ասում էիր. «Բանը
գլուխ բե՛ր, էշդ կ'դառնամ»:

Մ Կ Ի Ճ

Պարով լիւղիւս սլապանձվէր, ա~
սած չիլի: Մարթ չա՛մ. սխալվալ ամ,
ախպէր, հի՞նչ կասէք (Ծիծաղում եմ):
Տրանք ջահիլ ա՛ն, ծըծաղըման, տի՞ւ
հինչի՛ ես ծըծաղըմ, ախր բա՛խտա՛վա՛ր
տիւ մեր աղսախկալն էս, չէ՞ որ կըն~
քօօրս ես իւա՛լ—ոչ պարով փեսայ ինք
իւալ:-- Հինչպէս միացուրալ էս, ա՛նա՛նց
ա՛լ ճօկի՛ր: Ախպէր ճօկեցէք ալի՛. հի՞նչ
էք ծըծաղըմ: Քուշտը քաղցածին մանր
կ'փերթի. հա՛: Մին կնիք քի ա՛ս խո~
ղարածի հետնան չաչկայ-լօշկայ իւա՛ծ
ուղում էր իւրա՛ն մարթին սպանի, ես
նրան մարթութիւն անիլ չամ կարիլ,
չամ կարիլ, չամ կարիլ:

ԽՕՁԱ-ԱՐՁՐԱՆ

Աղա համալթ չի, վըէր էդ գէօ-
ղա՛լ կնգայ ե՛րա լա՛քա՛ ըս քիցըմ:

Մ Կ Ի Ճ

Բա՛լի ա՛, պառաւը իւրա՛ն թա-
նին թթու չի ասիւ: Հասկանըմամ: Մի՞ն
էք իլա՛լ հա՛: Տա՛ր, տա՛ր, ախպէր,
չուղեցինք, լիացանք տրանայ: Տա՛ր,
թաթդ մէշկով քիցի, տա՛ր, քեզ հալալ
իլի՛: Տա՛ր, Աստօծ բարի վայելում տայ:
Քեզ բախշեցի, տա՛ր, խէրը տե՛ս: Տա՛ր
ձեր շինի լուսաւորացրո՛ւ: Ինձանայ չէշ-
մա՛դ էր ուղում, ֆայտօն էր ուղում,
տա՛ր գիւմաշի արաբիով կատացայ իլե-
ցէ՛ք: Ինձանայ տուսուռ էր ուղում,
փալանըթ տի՛ր մէշկին, տա՛ր խաթաթ
մեղանայ ուղ արա՛: (Աքրախաւիկն):
Ապեր, ինձի ա՛ս օձի ճուտի ցէքան ա-
ղատի՛ր: Տրա սիլիգ-պիլիգ անիլին ա՛մ
խաբվալ. ա՛ն որ կասան «օձը հեղին

ծուռ-մուռ կիքինայ, պիւնիւ մանիլիս
դի՛ւղ», տայ ա: Ինձի աղատի՛ր, մեղք ամ:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Երէկ միտքդ ուրիշ էր, այսօր ուրիշ:

Մ Կ Ի Ճ

Տկլօրի մտքով օրը 15 դա՛ղ կտաւ
ա անց կանըմ: Մեք ալ մին մարդի
տղայ անք: Ա՛րա՛դ սուբայ ի՛ կնիգ ի
ուղում, ասօր կնիգ ունամ՝ ուղում ամ
սուբայանամ: Ա՛ն վաղի ասած, թո՛ղ
քինայ իւրա՛ն հետի թա՛ղա՛-թա՛ղա՛
սիրականներ ճօրի: Պա՛նի վերչացրո՛ւ,
ապեր. ճա՛շա՛թա՛մի վախտն ա, քինա՛նք
մին «Տէր-Ամենակալ» լիսա՛նք:

Ա Բ Բ Ա Հ Ա Մ

Դէ որ քո նամուտդ վեր է առնում,
թո՛ղ քո կնիկդ դառնայ Խօջա-Արղը-
մանի կնիկը: (Խօջա-Արղըմանիկն) Վեր-
ցո՛ւր, հալալ լինի քեզ: (Խօջա-Արղը-
մանը քոնում է Անքառաւի ձեռքը):

Մ Կ Ի Ճ

(Խօջա-Արզրանիկ) Իմ ճրագս
հանգվեց, քունը վառվեց: Աստօժ շանօօր
անի (Խօջա-Արզրանիկ եւ Անքառաւ
մեաք բարեւ եւ անուր եւ զնուր եւ
միջի դժնով):

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս

(Մկիճիկն որ ուրախացել է). Տնա՛-
շէն, գեղեցիկ հարգ տարին և դու
դեռ ուրախանո՞ւմ ես:

Մ Կ Ի Ճ

Ախ, Մարտիրոս ապեր, մա՞րթ կայ
քի կնիգի կլխան ուղ անի, ինքը չու-
րախանայ:





2m.

ՀՀ Ազգային գրադարան



NL0585554

